զի ինքն անձամբ աշխատէր և զամենայն յաւժարեցուցանէր
ի շինութիւնն։ Եւ Բ տարի էջմիածինն եկաց. տարի մի Կիրա-
կոս կաթուղիկոսովն և տարի մի Գրիգոր կաթուղիկոսովն։ Զա-
մենայն վիշտս կրեաց ի մարմնաւոր կարեաց կողմանէն. ապա
5 ի հոգևորն խիստ ուրախ էր և ցնծայր, զի Էջմիածնին դուռն
բացաւ, և Քրիստոս անդ պատարագեցաւ և ընդ ամենայն
ազգս Հայոց նա հաշտեցաւ և բոլոր ամենայն քրիստոնէից
մեղաց թողութիւն շնորհեցաւ միջնորդութեամբ միածին որ-
դոյն Աստուծոյ. եւս առաւել մեծ բարեխնամպետին Թումայի
10 և որք ընդ նմա աշխատեցան և աշակերտեցան և չարչարեցան
ի շինութիւն սուրբ Էջմիածնին, Հռիփսիմին և Գայիանին.
միոյն հարիւրապատիկ և հազարապատիկ վարձս հատուցանէ
միածին որդին Աստուծոյ Թումայ մեծ վարդապետին և իւր
աշակերտացն և սիրելեացն և բարեկամացն, զանթառամ փա-
15 ռաց պսակն, ցնծալ, պարիլ ընդ հրեշտակացն ի յառագաստ
աւրիորդացն. ամէն։

Եւ եղև վախճան նորա ի մայիսի ԺԵ յաւուր կիրակէի
երևման խաչին, ընդ ծագել արագականն, յերկիրն Այրարա-
տեան, ի գիւղաքաղաքն Արկուռի, առ ոտս Մասեաց լերինն
20 ի դէմ կենդանաթաղ գերեզմանին սուրբ Լուսաւորչին, զի
փողն Գաբրիէլ հրեշտակապետին անդ կոչելոց է և Նոյեան

---

1) Ա. յանձամբն յաշխատէր Դ. անձամբն

2) Դ. ի շինութ՚ի Ա. էկաց Դ. յէջմիածին

3) Ա. գրիգորովն. Ա. չ. կաթուղիկոսովն

4) ԲԳ. զամենի վիշտն Ե. զամէնին վիշտ Ա. կրեց փ. կարեաց Բ. կրե՚ց կող. Դ. չ. կարեաց

5) Ա. յէջմիածնին

7) Ա. յազգս, անդ փ. նա

8) Դ. միածնի

9) ԱԵ. Թումայի Դ. Թօմ՚յի 10) Ե. չ. աշխատեցան

11) Ա. յէջմիածնին Բ. հռոփսիմին ԱԲ. չ. եւ Գայիանին Գ. հռեփ-սիմին Դ. Գայիանէին

12) Դ. հատուցէ

13) ԱԵ. Թումայ Դ. Թօմայի մեծի Ա. յիւր

14) Բ. աշկ՚րտն

17) Ա. ի մայիսի ԺԷ

18) ԱԲ. յաշխարհն փ. յերկիրն Ա յարարատեան Բ. արայրատեան

19) Բ. ի գեղք՚ղքն ի յարկուռի ԳԵ. ի գեղաքաղաքն ի արկուռի

20) Ա. ի դէպ փ. ի դէմ

21) ԱԲ. փող Ե. գ՚բրէլի ԲԵ. գոչելոցն է